

ԼՕՐԻՄ

ՄԵՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

ՕՐՆԻԿ ՈՍԿԵՐԶԵԱՆ

ՀՐԱԶ ՈՍԿԵՐԶԵԱՆ

ՕՐՆԻԿ ԿԱԺԱՐԵԱՆ

Le sang est triste, mais gai comme
les roses

S'il est verse pour une sainte
chose.

PAUL FORTE

Ի ՆՊԱՍՏ ՈՐԲԵՐԻ

(ԱՍՍՏՈՒՐԻ ԾԱՌԱՋԱԲԱՆՈՎ)

1916

«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ՏՊԱՐԱՆ

Պ օ ւ ր ք և

891.99

2-82

891.99

L-82

19 NOV 2011

ԼՕՐԻՍ

ՄԵՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

ՕՆՆԻԿ ՈՍԿԵՐԶԵԱՆ
ՀՐԱԶ ՈՍԿԵՐԶԵԱՆ
ՕՆՆԻԿ ԿԱԺԱՐԵԱՆ

Le sang est triste, mais gai comme
les roses
S'il est versé pour une sainte
chose.

PAUL FORTE

Ի ՆՊԱՍՏ ՈՐԲԵՐԻ

(ԱՍՍՏՈՒՐԻ ՅԱՌԱՋԱԲԱՆՈՎ)

1916

«ՀԱՅՐԵՆԻՔ»Ի ՏՊԱՐԱՆ

Պ օ Ս Ք Ր Թ

*Խոսքերս ընդհանուր
պայմաններում
հարկ չեն հետևի. բայց
յո՞ւրեմբ հրահանգներ
կան*

Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Գրքոյի մը, պարզ, յստակ ու սիրուն, ուր հեղինակը մեզի կը պատմէ երեք ամերիկահայ կամաւորներու կեանքի պատմութիւնները:

Իր պատմելու ձեւը խիստ ինքնատիպ է ու յստահանշական, գրեթէ հեքեաթունակ: Իր խօսելու ձեւը ինծի յիշեցնել կուտայ հայ մամիկը՝ որ թոնիրին շուրջ նստած հէքեաթ կը պատմէ, իրական հէքեաթ մը, որու մէջ կարելի է գտնել քիչ մը հիւսօք, քիչ մը բարոյականութիւն, քիչ մը յոյս ու քիչ մըն ալ չարածճի ակնարկութիւն:

Իսկ իր նիւթը: Քանի մը երիտասարդներու կեանքի գիրքը ա՛յնքան ալ հետաքրքրական ու շահեկան չպիտի ներկայանար թերևս մեզի համար, եթէ երբէք ան կապուած չըլլար մեր ամենէն պատմական ու պարբ, ամենէն հերոսական ու շիտակ, ամենէն թելադրիչ ու յեղափոխական ու մանաւա՛նդ ամենէն շատ ազգային եզոյ կամաւորական Ծարժումին հետ: Այս իսկ պատճառով է որ Լօրիսի կատարած աշխատանքը ինծի կը թուի շատ գովելի, ու այս գրքոյի հրատարակութիւնը՝ արդարա՛նալի:

Որովհետեւ ա՛լ ժամանակն է որ մենք սորվինք գիտնալ թէ՛ մեր ամենէն ժողովրդական ու մեծ հերոսներէն մինչեւ ամենէն անզարգ ու համեստներն անզամ թանկագին են ու պաշտելի, թէ՛ մեր



64460.67

ամենէն աննշան ու արժէքով փոքր նահատակներն անդամ մէյթէկ սուրբեր են, սուրբեր՝ զոհուած ազնուագոյն Դասի մը սեղանին վրայ, և մէյ մէկ կուռքեր են, կուռքեր՝ կանգնուած գեղեցիկ փլատակներու վրայ:

Ինծի կը թուի թէ՛ այս գրքոյիկին մէջ այդ գաւառ կայ: Անոր ընթերցումը կրնայ օգտակար ըլլալ ուրեմն:

1916, Դեկտ. 18, Պոսթօֆ

ԱՍՍՏՈՒՐ

ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍՔ

Հնչեց ահագանդը ոճրածին պատերազմին. աւարտ աշխարհ թունդ ելաւ, բայց ամէնքից առաջ հայի կիսավառ օճախը ... փլաւ:

Ձեռներն յողնեցին սրեր դարբնելուց. դրաստն սպառուեց բեռից, գնդակից. երկաթուղին էլ ասես պարտասած անլեզու շնչով հոնչեց ուժգին: Մարդ ընդդէմ մարդի, մարտ ընդդէմ մարտի, ու հէնց սկզբից, պատիր ներկայիս, և դես ո՞վ դիտէ որքան երկար էլ կուող զինուորի մայր, քոյրն, ու բալան սեսնելու են միշտ ոճիր ու թալան:

Գոյութեա՞ն պայքար ... ուժն հանդէպ ուժի, կայուն ջրերն էլ փոխան ջրվէժի: Ձէնքը խեղճ արւեց. մարդն իրրեւ գործի, գորեզն ու տկար էլան գէ՛մ գործի ... բազուկի փորձի:

Ի՞նչ կեանք — հողի կար, քար ու քանդ արին.
Ի՞նչ կոյս — ազջիկ կար բէմուրատ տարին.

Մանուկն ու ծերը, չափահասն ու կին,

Ձոհերը դառան շարագործ գանկին:

Եւ այսօ՞ր ...

Հարցերի հարցը ... որի պատասխանը անասունները միայն կարող են տալ:

Թէ որքա՞ն ուղիղ էր մեր Այդ Նագարի իշով, ժանդոտած ու դուլ թրով — այրի կնոջ թանկագի՞ն լուծայ — մասնակցել համաշխարհային պատերազմին, պաշտպանեմ՝ տակ կը գնամ, վար դարկեմ՝ մէջը կը մնամ: Ճշմարիտ էր, երբ ... սրանով հանդերձ չենք սուժած սակայն: Բորենիների վատ

ախորժակը ամէն պարագայում յղիանալու էր անմեղների արիւնով : Առանց կամաւորական շարժումի յեղափոխական մի առնացի քայլի, մեր սիրելիքը մորթութուելու էին արդէն որպէս փոխ վրէժ օտար ճակատների պարտութեան :

Թիւրքը թիւրք է ծնւել. երեւի մենք էլ տուրք ենք ստեղծւել :

Անմիտ պողոտիկոսների կոկորդը թո՛ղ ճաքւի ուրեմն :

Բարելոնական խառնակութիւնից չաղատուած իսկ, իմ անձնական, եւ հաւատում եմ նոյնպէս՝ որ առողջ մտածողների եզրակացութիւնը պարզ է :

Երկիր մեկնող կամաւորը ... մարդ էր :

Ընգըլ Սէմի ձագ լինողը ... սարդ էր :

Պատւի դաշտում ընկնողները լաւերն էին :

Իսկ փախուցող ետ եկողը ... հաւերն էին :

Տարրական քաղաքավարութիւնից դրդւած՝ ներում եմ խնդրում այն ամէնքից որ հազիւ ժամանած Թիֆլիս ու Խարկով, իրանց ուժը փորձեցին նախ փափկասուն հայ օրիորդների դէմ — յաղթողներ կարծեմ եղան — : Նոյնպէս շատերից, որ Ամբրիկայի հիւանդանոցների անմաքրութեան կամ նըւազութեան պատճառով դիմեցին Մոսկով—Քեռու հոգածութեան եւ թշերը լիքը, կարմիր այտերով յետ դառան, Ազգային Բիւրօից փոխ վերցրած փողը չի վերադարձնելու պայմանով... Ա. ի Կ. Կ. ին :

Ուղիղ սրտով համամիտ եմ ազատական թուղթ կրողների վերադարձին :

Մի կո՛ղմ սակայն ընկերային գծում ասէ՛կօ՛

սէներից, կեանքի դժերը պատկերենք լուկ այն երեք Չահրիլ-Ջիւաններին որ փառքով ընկան պատւի — դաշտում, ցոյց տալու ե՛ փողով ե՛ կեանքով դո՛հարերող Քղիի Նոր-Սերնդին :

Դեկտ. 14, 1916

Իստ Ուօտրատուն, Մէս.

ԼՕՐԻՍ



ՕՆՆԻԿ ՈՍԿԵՐԶԵԱՆ

ՄԵՐ ԱՆԴՐԱՆԻԿ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԸ

Արիւնն է տխուր, բայց վարդի պէս վառ,
Երբ որ թափւած է սուրբ գործի համար :

Պ. Գ.

ՕՆՆԻԿ ՈՍԿԵՐԶԵԱՆ

I

Կամաւորական Ա. գնդի ստաջին զոհերից մինն
եղաւ նա :

Արժէ ուրե՛մն ճանաչել մանուկին, պատանուն
և ապա անյուսալի զոչազ տղամարդուն :

Քզի — Քաղաքի երբե՛մնի հարուստ մի ընտա-
նիքի զաւակն էր. անդրանիկ մանչը, ծնւած 1892ին :
Հակառակ նիւթական անտանելի կացութեան, մո-
տաւոր բարեկամների յօշոտումներին, Սարգիս ա-
ղան՝ բնականից ուսեալ ու կիրթ, մտեհան չէր ա-
նում անձկութեան բոպէներին իսկ օրական ժամե-
րով պարապել փոքրերի կրթութեան : Մին՝ երկու,

չորսը՝ վեց այսպէս եկան շարան-շարան օրօրոցի նոր բնակիչները տարիների ընթացքում ու դառնացած հայրն այլեւս ընկճւած և՛ փոքրերի հոգսից և՛ կարծեցեալ մօտերների զրպարտութիւնից, հանգիստ առաւ գերեզմանում՝ յոյսի վերջին ակնարկն յառած մեծ որդուն՝ Օննիկին:

Թաղային նախակրթարանի աշակերտներ էինք միասին, բայց մեզ համար դասն ի՞նչ էր, երբ այլադան աղբիւրներ կային հաճոյքի ու զւարճութեան — ճան ու չուլէփէ խաղալ, գերի բռնել, եւ մանաւանդ խնձորի ու ընկոզի դողութեան գնալ: Այս ամէնքից զուրկ էր սակայն տարաբախտ Օննիկը: Հօր կենդանութեան՝ արդիւլած էր խեղճին ընկերանալ գաւառը-ճժերուս. իսկ մահից ետք՝ աւելի վատ, մուկ չը դառած ստիպւեց զբուրել ծակել, 14 տարեկան Օննիկը դեռ ամուրի՝ փոքրերի հայր նշանակեց:

Պարտաւորւած կիսկատար թողեց ուսմունքը և ձեռն առաւ Ծուկի—ճամբան: Արհեստով դերձակ, պարապմունքով ամէն բան էր սակայն: Էլմէզի իշանը 50 փարան չտեսած՝ կանգ չէին առնում նրանց դռանը: Ծալակով կրած փայտը դարձանն էր այդ պակասին: Հօրից ժառանգած մի բուռը հողից հանգիւ էր ճարուում Քղեցու կենսական սնունդը՝ թոնիրի հացը: Իսկ Սասար Աւետը համարեա նրանց երեսը չէր տեսնում տարին մի անգամ ջիգեարի կամ խաւի համար: Ապրուստ չէր՝ բայց չէին էլ մեռնում քաղցից:

Հա՛ պրէ, տօ՛ պրէ, ե՞րբ էր լրանալու չորս կամ հինգ տարին որ Քղեցի—աշկերտը, լաւ է ասել

վարպետի բեռնակիրը, երես ունենար ինքնիրան ներկայացնելու որպէս խալփա, ստանալու մի շա՛տ չնչին տարեվարձ: Այս երկաթի բեռին տակ իսկ Օննիկը չէր մոռանում երբեմն սլարապել ազգային գրքերով և մասնաւորաբար ժամու դպրութեամբ: Ծնորհիւ իր յաջող ձայնին եւ համեստ բնաւորութեան, որպէս «չկայ»ներից լաւագոյն, ուսուցիչ կարգւեց նա Ճասպողջուրի փոքրիկ դպրոցին: Սովորեցնելիս՝ ուսանելու փափաքն անպայման զարթում է մարդու ուղեղում: Ամերիկայից վերադարձողների հետ շփուելով, որոշեց վերջ տալ միամեայ պաշտօնավարութեան եւ մեկնել Ամերիկայ, ուր աւտում էին ... ամէն ինչ կայ:

Ըստ նահապետական սովորութեան, կէս ճամբի ծախս փոխ առած մի վաշխառուից եւ կրկնակ օգնութիւնից ետք, հասնում է վերջապէս Երկիրն Աւետեաց:

Մի տարի վերջ հանդիպեցի նրան այստեղ, եւ դտայ վերին սատիճանի դո՛հ: Պարտքը մաքրելուց դէն՝ փող էլ ուղարկել էր մօր ու փոքրերին:

Երկու տարւան միասին ապրած մեր կեանքն առիթ տւեց ինձ հոգով-սրտով ծանօթանալ նրան: Ատող, թշնամի հանդէպ կեղծիքի ու լրբութեան եւ արտաքոյ կարգի ընկերասէր: Այս երկու յատկանքը հանկուտ կողմերից արբշիտ, կապուցի նրան յաւէտ անբաժան:

Թէպէտ գրաււած կուսակցական կեանքից, չէր ցանկանում սակայն անդամագրւել որեւէ մէկին, պարզապէս չխորտակելու խնայողական հաշիւն, որի սէնթն իսկ սահմանւած էր որբերին: Երեք

տարւայ չըջանում նրա օգնութեան քանակին՝ հաւասարող հաղադիւտ հայեր կարելի է միայն հաշուել:

Նա տքնում էր, ծրարում, ու փոքրերին հաց ճարում:

Մինչ այս, հիմնադիրն էր արդէն Վօտրտաունի Արարատ դերասանախմբին, որից հեռացաւ ինչինչ հաշիւներով և մեր յաճախակի վիճարանութիւններից վերջնապէս որոշել էր անդամակցել տեղական կոմիտէին, մի արգելք դեռ տատամսեցնում էր նրան: Լինելով Հոռտի դործաւորներից, — մշտական փարախը մի հաստագլուխ ռամիկի — որի «գործ տալով»ը շատեր են մկրտուել, Օննիկը բնականից հակակիր այդ խարբուք-ֆիւֆքէն ռումբ կարծողին, հեռի էր մնում հաւասարապէս կուսակցութիւններից: Երկրի հաղորդակցութիւնը խզելիս, փարատեց եւ նրա անակընկալ երկիւղը, որովհետեւ էլ հաշի մէջ չկային «մէք ու աղբէր» ու դեռ հպարտութեամբ չկրած խորհրդանիշն իր դաւանանքին, վարակել էր ինչ որ կուէի մտմտուքով: Ամիսների բաժանումից ետք՝ մի օր յանկարծակի ցցեց կողքիս, ականջիս փսսալով միայն իր որոշումի մասին:

Ամերիկահայ կամաւորների մեր Ա. խումբն էր գնալու Կովկաս: Ծատ էլ դուր չէկաւ ինձ իր առաջարկը, ինչու որ մտքիս պարզեց անմիջական իր փոքրերի կարաւանը սովալլուկ: Ընդդիմացայ՝ խռուովեց. համակերպւեցի՝ համրուեց ինձ:

Մի շարաթ անց՝ շաջողւելու լուրն առայ: Գոհ էի: Պատահեց սակայն որ կրկին տեսակցենք Բ.

խմբի մեկնումին: Հակառակ աղակաւանների բողոքին ուղարկող մարմնի մօտ, էլի մալից չէր վանել միանալու գաղափարը: Տնաքանդ տեղահանութեան շջմեցնող հարածը կուէլ էր նրան վերջին որոշումով:

— Գործե՛լ . . . էլ որի՞ համար:

Սրանով հանդերձ՝ մերժեց:

Անգին մտերւիների խմբից բաժանւեցինք արցունքոտ աչերով, ու դրեթէ քուն չեղանք դիշերն ի բուն:

— Հէ՛յ, մօրբրօ՛ղլի, կամ մահ կամ դնալ. դուռաց յանկարծ ականջիս ու ես ցատկեցի անկողնից կէս թմրած վիճակով:

Գէմքի արտայայտութիւնը այլակերպած էր: Յօնքերս պոստելիս՝ մոռաց, բայց ճարպիկօրէն թափանցած ինձ պարուրող հիացմունքին՝ գրկեց ինձ:

— Կ'ուղարկե՛ս. չէ՞

Միչէլ Անջէլօյին մտարերեցի խոյն, որ բարեխտութիւնը չէր ունեցել նկարելու մի յաւէտ—բնական դիրքի, որի տակ մեծ պարծանքով կարող էր մակադրել Աղերսը:

Զինաթափուած կատայրելապէս, ես էլ բորբոքւեցի:

Հինգ բոպէ հաղւելու, նոյնքան եւ պող կաթով նախաճաշի՝ դուռն ենք արդէն:

Լոկ մտահոգիչ պարազան փողի պակասութիւնն էր փոքր մասով, ինչ որ ճարեցինք դիւրութեամբ: Նա կը դնար եւ Արքայի պէս տեղ կը հասնէր թէ նախապէս մեծ ծախս չանէր իր հողհատոր

ընկերոջ Արշակ Տարօնու վրայ, որից ի փոխան ըստացել էր ջերմիկ համրոյրներ և ձի Անդլ-հայ բառ-գիրք որի առաջին թղթում այսպէս էր գրւած.

Նուէր

Առ պաշտելի իմ հոգեկցորդ
Յովհաննէս Ոսկերչեան:

Յիշէ՛ տառապեալ ընկերդ քու Սգոյ եւ երջանիկ օրերուդ մէջ: Ուր որ գնաս իմ անխորտակելի գաղափարներով կռանուած՝ յիշէ՛ մեր աւեր վաթանը, վրիժառու—երկաթէ բազուկներովդ ասարկու դարբնէ Ուխտը կարմիր, Ուխտը ըմբոստ եւ Ուխտը վրէժի՛ անխորտակելի կամքէն, եւ եթէ սաբալանջի միտն վրայ իյնամ այլեւս յաւէտ անվերադարձ, մի՛ սգար, և ոչ ալ պաշտի՛ր: Սլացի՛ր դէպի հոն. ցնցէ՛ վրէժխնդութեանդ գերանդին, կոտորէ՛ անխնայ, փշրէ՛ նրանց սեւ գանկերը ու տո՛ւր մըրիկներու բերան, որոնք զանգատ ունին մեզ պէս և վրէժի արիւնով անյագ....

Յաւէտ քեզ պաշտող գաղափարակից ընկերդ

ԱՐՇԱԿ ՏԱՐՕՆԻ

Փողը ճարելիս, հաղիւ կարողացանք հարկաւոր սպիտակեղէն գնել և սուրալ Հարաւի կայարանը: Որոշուծը կայացել էր հինգ րոպէում, նոյնքանով էլ բաժանւեցինք փոխադարձ, վերջին ... ա՛խ, տաքուկ համրոյրով: Վայրաշարժը սուրաց, ձեռքի համրոյրի հետ յուզումնալից մըմունջն էլ լսեցի.

— Չմոռանա՛ս որբերիս՝ եթէ ողջ են...
Ո՛ղջ են. Օննիկ, ո՛ղջ, բայց կենդանի՛ գրիակներ:

II

Նիւ Եօրք ժամանած ծիանում է ընկերներին: Անակընկալ կարգադրութեամբ ստիպւել էին երկու շարաթով սպասել այնտեղ: Ուստի նա սպասաւոր է լինում ընկերների առժամեայ ճաշարանում խնայելով զոյգն ճանապարհածախսին: Հասնում է եւ օրը մեկնումի, ոչ մի պատրաստութիւն նրա անցադրին: Ընկերներից բաժանւելու միտքը խելագարեցնում է համարեա, ու մետասաներորդ ժամին՝ տժոյն ու խոժոն, կարգադիր Խ.ին մօտեցած, հաղիւ է կարողանում մըմնջալ հեկեկանքով.

— Ծ...ո՞...վի...ը, ծո...վ...ը կը նետտ...
վ... իմ:

Վճռական որոշումից յաղթահարւած՝ ստիպւում են նաւի սանդուխքը չփակւած մի անձնական գիմուժով ներս սպրդեցնել նրան:

Գժւել էր, յաջողանքից արբշիւ:

Վերջին նամակն առայ մատիտով շարուած ու անկապ:

Արխանգելսից գրեց տպաւորութիւններն Ուկրիանոսին, բարեկամութի՛ւնը սառին—սղոխին եւ սարսափելի զաղրանքը արտայայտած մի ինտիլիգենդ պարոնի, որն հակառակ իր գիրքին, թողած խմբին, մշտական այցելուն է լինում խոհանոցի դէկօլտէ սպասուհիներին, չմոռանալով եւ վերջին

անդամ ընդհանուրի կոպեկներով վարձատրել նըրանց :

«Այս թրէ՞մփն է որ կուի դաշտ պիտ' դայ մեզ հետ...» վերջացնում էր նա :

Օննիկ ջա'ն, հարկաւոր չէր մարդարէ լինելու, ասածդ իրագործւեց : Ադամ'ն եկաւ՝ Եւան կողքին... :

Յաջորդաբար հասան կամքի անյողողղդ դրօշմը կրող գրութիւններ և ահա Երեւանից վերջինով աւետում էր զօրաշարժը : Ապա՝ Վանից .

«Թրքահայաստանի սահմանում առաջին քայլիս դձևայ ու հողն համբուրեցի : Կարօտի համբոյրներ բոլոր ծանօթներուս : Ասա՛ իրենց որ չը պիտի մոռնամ իւրաքանչիւրը ... ամէն մէկ անվրէպ գնդակիս» :

Էլ երկար ատեն լուռ մնաց, մինչեւ յաղթական՝ Ձիւնի Ձորի կուից, իր վերջին յոռետես տողերն էր վերջացնում՝ ասես ընկճումով .

«Առաւօտ է : Բարի լո՛յս, (հող չէ թէ ձեզ համար իրիկուն է հիմակ) : Տօ՛ւ . պ... ամիսը կ'անցնի դեռ չեմ կրցեր թուղթ մատիտ ճարել գրելու համար : Սա՛ղ կենայ յիմնապետս . տողերս անոր կը պարտիս : Թէնք ետ կ'ըսես, չէ՞ : Կատակը մէկ կողմ, սարսափելի ցուրտ է . խրամատիս եզրին կանգուն՝ քանի ժամերէ ի վեր տասնեակիս կը հըսկեմ : Հակառակ յոգնութեանս՝ սիրելի է նորէն ինձ այսպէս էրիկմարդու գործ : Բան մ'ալ կայ . ըսե՛մ— չըսե՛մ : Չը կարծես որ կը վախնամ : Երբէ՛ք : Դառն նախագագու մը կը շարչրկէ զիս որ մօտ օրէն նամարտ թշնամու մէկ գնդակն ալ կեանքս պիտ' խը

Handwritten purple notes in the left margin.

79-09459

լէ : Հող չէ թէ կը մեռնիմ, բայց մի մոռնաք վըրէժս ...»

Մահւան բոթը գուժող տողերն ստացել էինք իր նամակից մի շարաթ առաջ :

Ի՛նչ արժէիս լացն ու ժւան Երբ շիջել էր կեանքը ջիւան :

III

Մահեցին ամիսներ, ոչ մի մանրամասնութիւն սպաննութեան նկատմամբ : Հասան ընկերներն իրար ետեւից, շատ ու քիչ տարբերութիւնով աւին կցկըտուր սեղեկութիւններ, մինչեւ բախտն ունեցայ կրկին ողջոյնով համբուրելու անուշիկ Ջիմիիս, ասես՝ Օննիկին ու նա սկսեց պատմել խորը գգացմունքով :

«Կօջարու կուին էր : Գիւլը նախապէս դատարկըւած բնակչութիւնից, ամբողջ էին հոն 1500 արիւնկղակ քրտեր, բայց լա՛ւ նշանառու, խկապէս : Նախ քան յարձակումը մի շատ նշանակելի դէպք պատահեց : Մի օր առաջ Տարօնու ձին փախել էր, հետեւաբար ստիպւած եկաւ մեր խմբում : Օննիկի զինուորները բաւականին փողի պաշար ունէին և մշտական օգնում էին մեզ տասնապետի խաբէր համար : Թէյը մեր հողին էր . բայց Օննիկի շաքարն սպառուել էր : Գնաց Արշակի մօտ և մի քիչ խնդրեց : Նա էլ խոստացաւ իւրաքանչիւր գլխի փոխան մի կտոր տալ ... կատակեցինք մի քիչ, համբուրեցինք (սովորութիւն էր ամէն կուից առաջ) և հրամանատարի դուրս գալու հետեւ, խուճը շարժեց :



Գիւղը ծովի եզրին էր. տներն էլ յաջորդաբար բարձրանում էին լեռան կողքին: Յարձակումը տաքացաւ. եկաւ մի րոպէ նոյնիսկ երբ հրամանատարն էլ ստիպւած ցած իջաւ ձիուց ու կուէց մեզ պէս: Գնդացիները օգնութեան հասան: Բարձր տներում ապաստանող թշնամին ոչնչացաւ հիմնովին: Երեկոյեան դէմ լոկ մի ցածր տնից էին մեզ պատասխանում: Հրամայւեց մեզ շղթայ կաղմել ու անվերջ սեղմել. աստիճանաբար մօտեցանք տան: Ոչ մի դոճ ժամերի ընթացքում. և ահա մի քիչ հեռւից լսեցին արտասանքի ձայներ. «խիւե՛ց, դարկաւ՛» Տարօնին էր, սատկած մի քիւրտի ձին ձեռ ձգելու մարմաջով խոյացել էր կենդանուն և ճակատից ստացել գնդակը մօտաւոր դիրքից:

— Արշակը մեռա՛ւ, Օննի՛կ, փսսացին մօտ կանգնողները:

Մի քանի տասնեակ արդէն տան շուրջն էինք. սկսեցինք բրիչներով քանդել ետեւը կրակ տալու միտումով:

— Ա՛ս տունէն էր գնդակը չէ՞, դոռաց Օննիկն ալլազունած, և հակառակ իրան ուղղւած զգուշանքին, ցատկեց յանդգնօրէն տանիքի վերեւ մի քանի կրակ բանալուց ետք բուխերիկից վար ասես խելագար, շուռ տուց տանիքից էլ ցած դռայ անցքի դէմ դիրք բռնելու: Անկումը կատարեց տապալելու համար. ոտներն հաղիւ հասած գետին, համազարկը բացեց տնից. գոռացին մի քանի հրացաններ միանգամայն ու խուլ սրտի ծիծից հաղիւ լսելի դառաւ վերջին մրմունջը սիրելի Օննիկին

— Վր...րէ ...ժս. ըն ...կեր ...նե՛՛՛ր

Հարւածը ցնցեց ամէնքիս:

— Բուռը՛ կրակ. աղե՛րք, ձեզ մատաղ, բացահանչեց քաջ Սմբատը: Ձգո՛՛յ՛ բայց յանդուզն որ շուները պատառ չտան մեր նահատակին: Անմիջական մի խումբ դիրք բռնեց ուղիղ դռայ դէմ ու նըրանց մշտական համազարկի տակ, երկու ընկերներ ծովի ափից սողոսկելով ինչպէս օձ, մօտացան ու քաշ տւին դիակին ... Տեսնելու էիք. ընկե՛ր. այնտե՛ղ, հայկական հողում, թէ ի՛նչ առիւծ էր դառել նա: Թշերը լիքն ու կարծիր, նրանց պատած նուրբ բեխն ու թաւ դնչամիրուքը, արտակարգօրէն համակրելի էին դարձնում նրան: Պատկել էր այնպէս խաղա՛ղ, մեղմ ժպիտը դէմքին, ասես քնած լինէր: Նա իսկի չէր նմանւում Ամբրիկայի Օննիկին. կրոււի դաշտո՛ւմ տեսնելու էիք նրան ... Չերկարե՛մ: Մութը կոխեց, հրամայւեց մեզ քաշել. մի ձիաւոր խումբ մնաց այնտեղ: Ասում են որ քրտերից մին գիշերով գուրս գալիս թաքստոցից մորթուեւ է մերոնցից. մնացեալները անհետացել են:

Յաջորդ առաւօտ մեր սւիններով փորեցինք մի լայն գերեզման:

— Երկու մարմին՝ բայց մի հոգու համար. չէ՞, հարցրի նրան:

— Անշուշտ. այդ միտումով լայն բացինք գերեզմանը. երկուսն էլ՝ Օննիկն ու Տարօնին կողք-կողքի գետեղած զգեստ ու փամփշտակալներով, ճառեր խօսեցին և՛ ուսս գեներալի կողմից, ապա հրամայւեց իւրաքանչիւրիս Յական կրակ բանալ համազարկով, հողը լցրինք, մի խոշոր քար գետե-



ՏԱՐՕՆԻ

ՕՆՆԻԿ

դեցինք վրան ու վերջին համբոյրներ տալով քարին ... հեռացանք:

Ծնեց, չարաչար մեծացաւ մեծ նահատակ Օննիկը, քիչ ապրեց, բայց լա՛ւ ապրեց. մեռա՛ւ բայց կենդանի է:

IV

Որպէս հաւատարիմ կտակակատար վաղամեռիկ դո՛հին, իր մահուան պարագայում միայն մօրն ու զարկելու էի հետեւեալ գրութիւնը: Ո՞ւր է այժմ սակայն: Անյայտութի՛ւն: Հետեւարար ամէն իրաւունքով հրապարակ եմ դնում՝ ուղղւած իրա հարազատ մօր՝ Մայր-Հայաստանին, հայ-կնոջ:

Մայրի՛կ,

էլ չեմ կարող սպասել: Կովկաս կը գնամ իմ ազգիս, հայրենիքիս համար մեռնելու: Ունիմ չա՛տ բաներ գրելիք թէ ինչպէս չեմ կարող մնալ նոյնիսկ մի րոպէ: Գիտեմ և կզգամ որ պարտականութիւն է մտածել ծնողք, եղբայր ու փոքր քոյրեր, որոնք իմ օգնութեան կը կարօտին: Բայց միեւնոյն ատեն կայ մեզի մի ուրիշ պարտականութիւն. որ այս վայրկեանիս անհրաժեշտ պէտք է զարձել բոլորիս համար: Ձգացումներս ու փափաքներս հաւասարապէս լցւած են երկուքին էլ հանդէպ, բայց բառերս կը պահսին: Կարողութիւն, ուժ չունիմ որ բացառուեմ թէ ինչո՞ւ պէտք է գնամ կամ կերթամ: Գիտեմ թէ ներկայիս ալ շատ պէտք ունիք ինձի որպէս հոգատար: Մի՛ ցաւիր եթէ կը սիրես զիս. մի՛ անիծեր երբ թշուա ըլլաք: Մի՛ ծեծեր քո գլուխ երբ կը մեռ-

նիմ իմ ընտանիքի, ընկերի, հայրենիքի սիրուն համար: Յիշի՛ր Ահարոնեանի «Այսքա՛ն Չարիք»ը: Աչքիդ առջև ունեցիր մօրքուրիս Երևանդը որ դո՛ւ գնաց սուլթանական գնդակին. յիշէ՛ նոյնանման հազարաւոր անմեղ զոհերը: Հիմի է՞լ լռենք. պիտ՛ լռէիր դու շրջապատողներուդ. խօսէ՛, ինչ որ կզգաս. ուրեմն ես ալ, նոյն ցաւով տանջւող քու հարազատ զաւակը է՞լ լռեմ: Մինչեւ ե՞րբ քաշենք այս չարչարանքը Ամերիկայի դորմարաններուն մէջ: Մինչեւ ե՞րբ Ատլանտեանի այս ափին կարօտովը մեռնինք ձեր ու մեր հայրենի լեռներին: Ուրախ եղի՛ր, մայրի՛կ, մի պատառ չոր հաց որ դըռնես, պղտիկներուս հետ կե՛ր, գոհ եղի՛ր, և աղօթէ՛ հայերուս յաջողութեան: Ուրախացիր որ քու զաւակն ալ Ադգին համար կռուելու կերթայ: Կ'երթամ՝ ոչ թէ ձեզ թշուառութեան մատնելու, այլ բռնարարուած քոյրերի պատուի փրկութեան: Թշուա՛ռ պիտ՛ մնանք՝ քանի չենք կռուիր: Եթէ՛ զիս պիտ՛ անիծես, եթէ՛ տուած կաթովդ չօրհնես զիս, իմ մահու ճամբիս մէջ օրհնելով չզովես, էլ ինչո՞ւ ասեմ թէ հայ եմ, դու էլ՝ մայրս: Այսպէս ըսելուս չցաւիս, մայրի՛կ: Գիտեմ թէ՛ դու մայրերի մէջ Մայրերի էլ թագուհին ես: Պարտականութիւնդ էր զիս ծնիլ. թող որ ես ալ մեռնելով կատարեմ իմը: Չեմ ցաւիր եթէ՛ մեռնիմ պատերազմի դաշտին մէջ: Բայց հաղա՛ր երանի եթէ՛ կռուից ետք յաղթական՝ ձեզ դտնէի: Մայրի՛կ, երբ օր լինի որ նամակս առնես, համբուրիր պղտիկներս իմ բերանով, ո՛ւր տուր անոնց մատաղ սրաին, անմեղ հոգուն եւ լեցո՛ւր վրէժի բոցերով: Սրբէ՛՛ արցունքդ եւ բա՛


զուկովդ սպրեցուր զանոնք: Եթէ՛ ինձմէ՛ դժգոհիս, յայտնէ՛ Աստծուդ, ես կ'իմանամ... ուրախ էլ լինիս, կրկին յայտնիր, այդ ալ կ'իմանամ եւ երջանիկ կը մեռնիմ մահւանս բոսէին: Մի՛ մոռնաք հայերուս նշանաբանը «Ամենայն տեղ մահը մի է»: Մայրի՛կ, այնպէս կրթէ՛ ու սովրեցուր փոքրիկներուս որ իմ ճամբիս հետեւին:

Անուշիկ եղբայրնե՛րս. քանի կ'ապրիք, ապրեցէք մեր ծնողքի պատիւը բարձր պահելու եւ երբ պարագան ներկայանայ ... լուծեցէք ձեր եզրօր վրէժը:

Կը համբուրեմ աչքերնիդ

Կեցէ՛ք բարո՛ւ

ՕՆՆԻԿ



ՀՐԱԶ ՈՍԿԵՐՉԵԱՆ

ՀՐԱԶ ՈՍԿԵՐՉԵԱՆ

Նա է՛լ ընկաւ բէ՛մուրատ, գնդակը գլխին, եղ-
բոր թարմ վրէժը սրտում :

«Հըպը ո՞ւր մնաց մեր քամրախտ Քղին,
Վերջին խօսքն էր այս վիրաւոր յղին :

Այսպէս է հաղորդում իր բնաւեր ընկերներէց
մին : Բիթլիսի առաջին կռիւն էր, երբ հրաման
տրեց երկու յիսնեակի զրո՛հ տալ, ուստա՛ գոռա-
լով : Հաղիւ երեք օր լանց, սրբազան վրէժի մի նոր
կրակ էլ աւերացել էր նրա կրծքին . տարաբախտ
ձանի գնդակահարելն էր այն :

Ուստա՛ բացազանչեց նա լիքը թոքերով, բայց
մեռտա՛ չառաց, հինգ ժամ տեւող հոգեվարքի ըն-
թացքում : Քղին եղաւ վերջին բառը, ներկայի ա-
մայի լեռնազանգաւածը, ձորի մէջ խողխողաւած
չեղջակոյտը, որտեղից ութ ժամ հեռո՛ւ, Քէօջմիւ-
սով բաժանուած Ընտրէսի գաչտում, աւազակ չէր-
քէզների գիւղն էր յինելու կուտակղին, ուր թեր-
եւս հանդիստ խղճով փակէր աչքերը, ինչպէս արեց
Վինեիի Գայլը : Տասն եւ ութ տարեան տարագիր

եղբորը նրանք մահացրին գնդակի փոխան խճաքար լցրած դարանչաններում ... Այս վրէժով էր տողորուն մեր Հրաչը, կամաւորական հարցից շա՛ա ու շա՛ա առաջ: «Լո՛կ երկու տարի» ասում էր ինձ հռոաչանքով, «երբ թքելով կը հեռանամ այս մարդակուլ երկրից, առաջին գնդակս փորձելով կօլովբօսի արձանին»: Եւ իրապէս նա խոստամնաղըրութ չը գտնուեց:

Գնա՛ց խոհուն մեր Սասմայ-Գաւիթը, բայց, ափսոս որ չկարողացաւ (հսկայի գերովը մարմնանալ որպէս մի նոր ձեռ. յանցանքը քաղաքակըրթութեան հնարած դաւաճան գնդակինն է. քանի՛ արժեն մեր նախնիքների նետն ու աղեղ, սուրը պողպատի, բազուկն երկաթի, երբ ուժի դէմ հընարքն է կանգուն, այդ լիբը ազիճը նոր դարերի մարդկութեան:

Ամէնքից յուսատուների շարքումն էի դատում նրան, որովհետեւ մանկական յուշքերիս իսկական ուժակարող Տորքն էր նա: Թաղային կոխների ժամանակ — է՛հ, ի՛նչ օրեր էին — առանց գէնքի, առանց դօրքի, Հրաչի եղակի արժանապատուութիւնը, կուի էր ելնում մեր թաղեցի մի շարք ... ճաղարների դէմ: Պայմանը պարզ էր, մենակ մարտընչողինն էր իգիտութիւնը վայել, ահա Հրաչի աշխարհահայեացքը:

Փոքր հասակից որբ, ամէն մի առաւելութիւն ունէր ազրելու որպէս հայկական աւազակ — նախանչանն ապադայ բմբոստ ողուն: Հակառակ պըտղատու ծառերի տէր լինելուն, դրացնի մալն աւելի համեղ էր. այսպէս նա համահասար սարսափն

էր Քարական ձորի ընկուզատէրերին: Բայց նա իսկի չէր շեղում Չադրչ Ալու սկզբունքից, — բաժին հանել տկար դողերին: Ամառուայ հեշտ ու թափառական կեանքին բնականաբար յաջորդելու էր մի համապատասխան ասպարէզ՝ ձմեռուայ ընթացքում, բեռ չլինելու մօտաւոր ազգականներին, նա ընտրել էր կրկին տղամարդի արհեստ, վայրի կենդանիների որսորդութիւն: Հրաչը խնայող տանտիկինների փրկարար հրեշտակն էր, առաջին անգամ թոնիրում եփւած էրւած հացերը լսկ հաւերի կեր կը լինէին, եթէ նրա բռնած ողջ դայլերի սարսափը չգողացնէր ամբողջ մանուկներին:

Երկար չտեւեց սակայն նահապետական դիւրակեաց օրերի շարքը. պատանեկան անդուսպ ալիքն հանդիպում էր այլեւս մօտակայ ընտանեկան մի փոքր օջախի կաղմութեան, ինչ որ առելի էր նրան. մեծաւոր մէկն այլ չկար, որին օրւայ նշանարանով «Ամերիկա կերթամ», «ցանկանում եմ ամուսնանալ» ասելու փոքրութիւնն ունէր, ուստի նա փախտական՝ անցաւ Ռուսիա, Նոր-Աշխարհ մեկնելու:

Մասնաւոր նկատումներով զանց էի առել թերթով հրատարակելու Հրաչի կեանքի ամենից յատկանշական դրւադը, այսօր սակայն, ստացածս տեղեկութեանց համաձայն, ոչ միայն հայ չըջանակներում, այլ գաղտնիք չէ մնացել եւ հարեւան ջրրտերին, որով թոյլ եմ սայիս ինձ հանդիստ խղճով նկարել մեր երխտասարդ հերոսի յանդուզն ողիսականը:

1904*ին էր կարծեմ, երբ մեր տեղի Ենթակօմիտէն մատնել էր Լազերից դնած ղէնքի ամբաստանութեամբ: Քանակով նւազ, բայց որակով լաւագոյն անդամները բանտ դրւեցին, հակառակ տրւելի ասարդին խուզարկութիւնից: (Լուկ Ս. եղբայրների հրացանը գրաւեց, այն էլ որպէս թէ կապ չունէր կուսակցական դործի հետ և մի քիւրտ բէկի միջնորդութեամբ կարգադրեցին կարճ ժամանակի բանտարկութիւնով): Տաճկական և մասնաւորապէս դաւառական պաշտօնեանների պատեհ առիթ էր. մի քանիական լիրայի տուգանքով բոլորին էլ արձակեցին: Պէտք է ասել որ երբէք լարած դրութիւն դոյութիւն չէր ունեցել երկու հարեւան ազգերում, ինչ որ սուր կերպարան էր առել Մուշի եւ Սասունի լեռներում, եւ խոհեմութիւն էր առանց այլեւայլութեան տալ ու պրծնել: Ազատեցին ամէնքը բացի վալազ Ս.ից, որը գիշերով ճանաչւել էր գէնք փոխադրելիս մօտակայ Ծծովարձ գիւղի Աբդուլլահ ղէվրիշի կողմից: Մեր թռէյնաբայլ թըղթատարը որ չորս օրուայ ճանապարհը մի օրից կտրում-անցնում էր Կարին, մահւան դուռն էր հասել, հետեւարար թոյլատրեցին նրան իր յարկի տակ հողին փչել . . . բարեբախտարար արձակումից ետք լաւացաւ:

Դատաւարութիւնը վերջացաւ ինքնին և նախկին հանդարտ դրութիւնը շարունակեց: Բայց կա-

* Մանուկ էի դեռ հաստատապէս չգիտեմ թուականի ճշգրտութիւնը: Մի տարով ետ կամ առաջ եղած պէտք է լինի:

րելի՞ էր միթէ առաջւայ բացերեսութեամբ շարունակել ընդհատուած դործը, հարկաւոր էր պատահած միջադէպի պատճառները մէջտեղից վերացնել ինչ որ միջոցով եւ յաջողեցին մասամբ: Որոշում են անպայման որպէս փոխ վրէժ նախ մաքրել ղէվրիշին: Հետապնդումների շարանից ետք վերջապէս ներկայանում է ըսպէն: Հրաչը՝ փոքրիկ Դօնօյի եւ Տորք-Դրէժի ընկերակցութեամբ, կիրակի օրով նշմարում են նրան քաղաքից գիւղ մեկնելիս: Միակ յարմար տեղը, ուր կարելի էր վերջացնել ղէրբօրն անչչուկ, Ս. Դաւթի անտօրիկ բերդի ետեւն էր. հետեւարար Քարական ձորի կտրուկ կածաններով մի ժամ առաջ ժամանում են սպաննութեան վայրը: Թաքնուած մի քարի տակ, արծի աչքերով հետեւում են լեռնազանգւած, վաթսունամեայ բայց դեռ առօրյ ղէվրիշի քայլերին: Դիրքի բաւականին վրտանդաւոր լինելուց, որոշել էին առ ի խոհեմութիւն հրազէն չգործածել՝ այլ Դօնօյի դարբնած զազան դանակները, մակազրւած «Վրէժ Նահատակների» հայ տառերով եւ սրածայր շիշեր: Մէկ էլ յանկարծ նշմարում են ապագայ գոհին մի այլ քրտի ընկերակցութեամբ: Խնդիրն այլ կերպարանք էր ստանում, կարելի չէր յաղթահարել երկու լեռի երեք պաղ դործիով, ըսպէսպէս յանդում են կրակի էլ եզրակացութեան, արհամարհելով և՛ մահ և՛ ձերբակալութիւն: Բարեբախտարար Քարգլխի դազաթից ընկեր քիւրտը բաժանւում է ղէվրիշից եւ իջնում Միատուն, իսկ զոհը միամիտ, գլխի ժամումով շարունակում է ղէվրի մօտակայ սպանդանոցը: Դրէժը որպէս երէց անգամ երրորդութեան՝


գործի ղեկավարութիւնը իրան էր վերապահել, մի-
այն իր հրամանով պէտք է դուրս ցատկէին Հրաչն
ու Դօնօն: Մտնուճիկ աչերով պտուղի վնասգործը
անհամբեր էր սակայն, հակառակ իր վերաւոր աջ
ձեռին, առաջին հարւածն իջեցնել էր ցանկանում
իր արհեստի թշնամուն: Չը նայած Դրէժի խիստ
յորդորներին, հագլու տաս քայլ իրանց և գոհի մէջ
տեղ Դօնօն նշմարեց քրտից գլուխը դուրս հա-
նելուն համար: Էլ սպասումի ատեն չէր, դէպքը
կատարեց շարժական պատկերի ձևով: Միահա-
մուս գրոհ տալիս՝ դէվրիչը վարանում է ետ ըն-
կըրկել, փախի ճար չկար, հետեւաբար երկիւղի ու
աղերսի մորմօքիչ շեշտով՝

— Մայրամ իւլ ալէքքիւմ, դօտայա՛ր, մրմնջում
է դողահար, ձեռից ցած ձգած հովանոցն ու դա-
դանակը:

Բարեւի սրտասխան դանակները մերկացան:

— Իօյլէ դօտայը՞ղ մի օլուր, Հիրաչա, պողա-
տեց վերջին անգամ քիւրտը:

Պաշարած մի անգամից սկսում են խոցուել:
Ո՞վ տեսել է սակայն քրտերի բազմամեղը դօտին,
— անթափանց ասպար փորին ու կրծքին — կարող
է դուշակել փոքր սրերի անդործածութիւնը: Էլ
յուսահատ բարեկամական աղաչանքից, հսկայ դէվ-
րիչը փաթաթուում է փոքրիկ Դօնօյին ու Հրաչին և
որպէս մանուկների սրկած թեւերով առաջ է շարժ-
ւում դէպի իր գլուղի դատիվայրը: Դրէժի հարւած-
ները կողից ու կոնտիկից բաւականին կասեցրին նրա
վաղքը: Չոհր յուսահատ տեղ հասնելուց, մօտա-
կայ կիրճի եզրին փորձում է վար գլորել հետ տա-



նելով և երկուսին. Այդանց է վճռական հարևածը
զալիս պատլիկ Դօնոյի ձեռից: Մօտալուստ մահի վը-
տանդից՝ ուժերն ի մի հաւաքած, սարսափի թոյ-
նով դանակն է մխրճում ճէնց կրծոսկրին և վիրա-
ւոր ձեռն էլ թաղում նրա սրտում: Չոհը տապալեց
ճէնց ահաւոր ժայռի գլխին դեռ թեւերի մէջ պըր-
կած փոքրերին: Դրէժի ակամայ օգնութիւնը փըր-
կում է նրանց: Անմիջական ու ամուր բռնած նրանց
սաներից, ազատում է գլորելուց դէպի անդունդ,
խակ վիրաւոր դէվրելը դը՛նկ-դը՛նկ ու դը՛նկ-դը՛նկ,
ժայռից-ժայռ անդնդից-անդունդ ընկնում է ձորա-
մէջի ձիւնակոյտի վերեւ:

— Փա՛ւք ճակատագրին, հաղիւ պըծանք ստա-
ցին երեքն էլ ինքնաբերաբար ու խոյացան ձորի
բերանով զոհի մօտ: Նա դեռ տապալկում էր ողե-
վարքով: Մի քանի շիշ էլ փորին և ահա մորթագերծ
խողը պատրաստ էր սպանդանոցի կարթից կախե-
լու...

Այժմ կը մնար ապահով խոստափել: Ոճիրը վե-
րագրել տալու համար մի քրտի և մասնաւորապէս
Հայդար բէգին, որը դէվրելի հակահիբներէց էր,
չտապում են պոկել զոհի զոյգ ականջները ... կա-
տարեալ գիւտ էր. իսկ և իսկ Հայդարի փաստ:
Հեռքերի խնդրին գալով՝ մտահոգիչ էր: Նոր տե-
ղացած անձրեւից հողը թարմ էր և պատրաստ դը-
րօշմելու քաղաքացու կօշիկից: Փայլատակող
միաքը կրկին ոգևորում է նրանց: Խլելով բոպէս-
պէս զոհի արեխներին, երկուսն ընթանում են միև-
նոյն քայլերով իսկ երրորդի չարոխը լըքուշ էր ա-
նում: Շտապում են Մովսոսի ուղղութեամբ, հետ-

քերը թաղած կանաչուտներում: Ամէն ինչ կարգին
էր, այդանցից կարելի էր որեւէ կողմ գնալ, նորից
գլխաւոր ճանապարհն էր դէպի Հայտարի որջը՝
Սուզուլջան:

Յաջորդ օրը ոճիրը պարզելիս՝ մին սասց հա-
յերն են. ոչ ոք կասկածեց բարեկամ թիւրքերին.
խակ զոհի շրջանակը կափ պահեց Հայդարից: Էլի
հայի անմիտ բերանարացութիւն էր որ խնդիրը հը-
րատարակեց իրական գոյնով՝ բայց արդէն ո՛ւշ
էր: Փոքրաթիւ դէվրիչները երկնչում էին ապագայ
անպատեհութիւններից և... լլում:

Դէվրելի ընկեր հայ-դաւաճանին խնայեց. ճա-
կատագրական մի գիպւածով: Անցնէ՛նք:

Չմոտանամ յեշատակել և մի երկրորդ դըւադ:
Մարսէյլի մօտիկ կղզում կարանտին էինք սպա-
սում: Ով եղել է այնտեղ, յեշում է որ մի աղբիւր
կայ, այն էլ պահապանի հսկողութեան տակ: Ջու-
րը սակաւ է, թանկագին ու սուղ, իսկ օտարական-
ների անկիրթ քաշքոտուքը պատճառ էր եղել բոլո-
րի մերժման: Լուր արեց Հրաչին՝ մի քանի բոպէից
այնտեղ էինք: Հակառակ Ֆրանսերէն բացաւրու-
թեանս, մերժեցի: Եւ ահա Հրաչն իր ֆօքն հա-
նած.

— Դատ դէմ ֆո՛ւլ. ետ Վօնը ֆա՞յթ, բացա,
գանչեց ու բուռնցքները սեղմած կանգնեց պահա-
պանի հանդէպ: Բոլորս էլ ապշած դիտում էինք,
ինչու որ անյայտ էր մեզ կոուի այս նորելուկ ձեւը:

— Բալտօն, մէսիէօ, դիտ լիւի բալտօն, մըր-
մընջաց ինձ խեղճ պահապանն ահաբեկ և թոյլա-
տրեց ամէնքին ջուր քաշել առա՛տ-առա՛տ:

Մի երբորդ պատմութիւնն եւս նրա կամաւորական կեանքից: Միեւնոյն տասնեակից իր կողքին կուտդ Վ.ն ասաց ինձ:

«Կօջարից ետք մեր ձեռն անցաւ մի աւերակ քրտական գիւղ: Անորոշ ժամանակով զինադազար էր: Երեկոյեան հրամայեց մեզ տասնեակ-տասնեակ քաշել աներում ու հողալ ինքներս: Մի ցածր խրճիթ էլ մեզ բաժին ընկաւ: Ծուռ ու մթապատ անցքից զգուշաւոր քայլքով առաջանալիս, ինչ որ անքոց լսեց, մեր հայկական մոմերը վառած նըշմարեցինք մի քիւրտ թոնրի վրայ կուջ եկած: Օննիկի թարմ սպաննութիւնից ետք երբէք առիթ չէր եղել Հրաչին քրտի դէմ դալ ազգականի վրէժն առնելու: Ուստի մօտեցաւ նրան հրացանը ձեռին: Յանկացանք նախ տեղեկութիւն առնել թշնամու նկատմամբ, բայց ամէն հարց մնաց անպատասխան:

— Կուռոէ քէրէ՛, մոնչաց Հրաչը կատաղի ալթմ քեզ ցոյց կը տամ, ասաց ու քաշեց դուից դուրս: Մի քանի բութ հարւած, զոհը տապալակում էր արիւնաթաթախ: Առաւօտ դռանը նրան սառած վիճակում ու աջ ձեռի ցուցամատը ուղղւած վեր:

— Հրա՛չ, ասացինք ամէ՛նքս, դանդատ է յայտնում քեզ դէմ: Ու հոհոացինք երկար:

— Սընըպակա՛ն, քրքջաց Հրաչը ու դաման քաշած դէն սրկեց ցցւած մատին:

Այդ օրն էլ հանդատեան էր: Ծորերս մաշած, իսկ Հրաչի ոտերն մերկ էին համարեա: Նա մի ըն-

կերոջ հետ դուրս ելաւ որսի և մի քանի ժամից յետ եկաւ մի գոյզ դուլպայ ձեռին:

— Որտեղից ճարեցիր, հարցրինք հետաքրքիր:

— Թող Պ.ն ասա. ես մի քիչ յուզւած եմ:

Ու Պ.ն սկսեց.

«Պարտէզների վշտտ պատերի տակ հանդիպեցինք թաքնւած երեք հողու. կեանքի երեք շրջանների ներկայացուցիչներին: Տարօրինակ գուգադիպութիւն էր: Մի ծեր, մի պատանի և մի փոքր աղջիկ: Հրաչի աչերն փայլատակեցին վրէժի զգացումով: Սա միայն կարող է ձանի դարձը մի քիչ մեղմացնել, ասաց ինձ Հրաչը ու սկսեց քրտերէն խօսել պատանուն: Հատ ու կտոր բառեր էի հասկանում միայն, եւ երիտասարդի զժկամակութիւնը աւելի հաստատեց զուշակութիւնս:

Ծերի խորհրդով տաս քայլ հեռաւորութեան կանդնեց վերջապէս պատանին ու Հրաչը կատաղի թափով, ակնարկն յառած զոհի աչերին՝ հոհոաց ու զնդակն արձակեց: Գլըխը՛ստ... հանդարտ էին երկուստէք: Ծերին բան չասաց սատակած լինելուն պատճառով, իսկ աղջկան չարտեց մացառների արանքում:

Կարելի չէ այս սուղ էջերում պատկերել նրա արկածալից կեանքը Բինկհէմից մինչեւ Ալասկայի սառցապատ դօտին, երբ ոսմատիզմից բռնւած, խճուղիների եզերքին՝ մենակ ու սովալլուկ, լոկ կարտոֆիլն էր կազմում ամէնօրեայ սնունդը: Նա

մեռնում էր սովից, բայց չէր մուրացկանութիւն անում:

Բախար ժպտեց ի վերջոյ, հիւանդութիւնից ապաքինած, կոկիկ պաշարով հայրենիք վերադարձաւ: Պօլսում տեսայ նրան տարիներ ընկած թիւնից ետք, բայց կնքան էլ սիրալիր չդառաւ մեր առաջին տեսակցութիւնը: Նախկին սարսուռը ըզգում էր իմ համակ էութեամբ, համարելով նրան միշտ առաջայ դէրօրիս: Երկու շաբաթ ետք, սակայն, բարեբախտութիւնն ունեցայ Հրաչի հետ նաև աննել դէպ Մարտէյլ. օրհնարար բողէ էր այն երբ նրա զոյգ-գիշեր աչերում նկատեցի արտասուքի կաթիլները շարա՛հ-շարա՛ն: Հարազատ եղբորից էր բաժանում, դեռ հայրենիք չժամանած:


Զարմանքս մեծ էր ապշութեան աստիճան: Հին օրերի դայլը՝ ներկայիս դառի՛ ալլափոխում: Տատամստ էի դեռ նրա վերաբերմամբ, եթէ խկական բացատրութիւնն ուշանար Հրաչի խառ թշնամու կողմից՝ Աւօենց Համբարձից: Առաջին շաբաթս էր Ուստրում, վերջինի հետ տեսակցելիս, երբ հարգեցի, ընկերիս ժամանումը.

— «Իրա՞ւ. եկա՞ւ. սուտ չե՞ս. ի՞նչ կ'ըսես ... սուրբ Հրաչը...» սկսեց կակաղել երբեմնի թշնամին: Զարմանքս փարատեց. սխալած չէի, նրա մանկական շար ունակութիւնները փոխարկւել էին համակ սիրոյ ու բարեսրտութեան. նա ծախսել էր տարիների խնայողութիւնը սմարների ճանկում նահատակող գաղթականներին:

«Ահաւասիկ մա՛րդը» արտասանեց Նապօլէօն, գերման փիլիսոփայ Կէօդէին ի տես: «Ահա գեր-

մարդը, հայտնի...» աւերացնում են ես, մատնանիչ անկող ըստր սարի մարաշներին, որոնք դրչի փոխան՝ դէնք, ետրի փոխան՝ գնդակը կըրծներին՝ քնո՛ւմ են անվերջ և խոտվում սակայն:

Հրաչի մահուան րօթի հետ, հասնում են և տարբեր աղէտալի լուրեր: Նրա յաւէտ զինակից Պետիկն ու Յակոբը սիրա չունեն այլևս ուղմի դաշտ մեկնելու... Կոտորել են անխնայ մեծի ու փոքրի. լուծւած է թերևս մասամբ վրէժն Հրաչների. բայց կաշկանդւած ազատութիւնը խոտի է նման, երբ որդը կայ թաքնւած նրա արմատների ներքեւ...:



ՕՆՆԻԿ ԿԱԺԱՐԵԱՆ

ՕՆՆԻԿ ԿԱԺԱՐԵԱՆ

(ԳԵՌՄՕ)

- Գեռ մեռո՛ւ, գեռ մեռո՛ւ
- Ի՛ր, ի՛ր, ի՛ր, ի՛ր, ի՛ր
- Մկլմ՛ւր, մկլմ՛ւր, մկլմ՛ւր
- Վա՛գ, վագ, վագ, վագ:

Իմ տան ձօտակայ լճակի եզրից, ամառ դիչև-
րով լսեցի մի անգամ էլ քո սիրական աչակերտ դոր-
տերի կոկոսը ու սարսափեցայ համակ էութեամբ:
Պառկեցի՝ վատ երազ. զարթեցի՝ աւեր տրամա-
դրութիւնով: Հէնց այդ օրը ողջունեցի ժամանու-
մը Վ.ին. ու ստացայ բացատրութիւնը գորտերի
չարագուշակ «վագ-վագ»ին:

Օննիկն ընկել էր Բիթլիտի վերջին կոիւններում:

— Տարարախտ հայ—Նորայրոս. մրմնջեցի կտիը-
ժանքից: Այժմ՝ որ աւելի բան պէտք ունէի կրթիչ
պատմութիւններից զրի աննկու և «զու գնացիր
ու ամենայն ընդ թեյ տարար, արդ ս՞րպէս թագա-
ւորեմ ի վերայ աւերակացս»:

Ինխառնական թուականների ծնունդներ կինք
ամէնքս, մեզ հետ և Օյնօն, ի վերջոյ ծանօթ Գեռ-
մօ մակդիրով: Մեր մանկական խմբից նա չորս հո-
գու էր հաւասար իր քառակուսի մարմնով: Ուժն՝
անսպառ, բնուորութեամբ՝ հանդարտ, իսկ ուղե-
զով՝ անճանալի հէքեաթարան: Ամառւան արձա-
կուրդին լիուլի վայելում էինք նրա դասախօսու-
թիւնները երեւակայութիւնից գուրս գուլութիւն ու-
նեցող յուէրժահարսերի ու պարիկներէ, արջերի

ու գայլերի: «Արջի մասին շատ չեմ «ցանկանում պատմել» կատակում էր նա յաճախ որովհետեւ վախենամ սարսափէք... ինձանից»: Ու ամէն դասից ետք, սրպէս յարգանք մեծ պրօֆէսորին*, գրի թըղթով փաթաթում էինք կարգաւ մի մի սիկարէթ լուրիայի ու ընկեղենու նուրբ տերեւներէց եւ անուշացնում թքոտած բերանը: Երջանի՛կ էինք, ի՛նչ ասեմ: Երանե՛լի մանկութիւն: Վատ բանի հետ քրնականից գործ չունէր. օրինակ թղթախաղը: Բայց տօն օրերին անպայման հարկաւոր էր կէս փաքէթ գէթ գնել՝ կարգով: Որտեղից ճարէր խեղճը տաս փարա: Հետեւաբար հետաքրքիր ակնարկով դիմում էր ինձ հաճութիւնս ստանալու: Մենակ լինէ՛լինք չէի համարձակում նրա հետ խաղալ եւ կամ միշտ ապառիկ որ ի վերջոյ բախիէի կարգ կը դասուէր: Իսկ ընկերների ներկայութեան ես որպէս արկարակազմ ու քիչ էլ խորամանկ կրտսեր անգամը մեր գաւոռջամբին, օգնութիւնն էի վայելում գանազան ընկերների, «քաղի՞ն խաղամ քէ պիլիին» վերջապէս միշտ յաղթական էի կանխիկ եղած պարագայում: Ու հետաքրքիր էր լսել պարուած Գեոմօյի յայտարարութիւնները.

— Համբերութի՛ւն, նորէ՛ն համբերութիւն, կրկի՛ն համբերութիւն ու գողահար ամէնքս էլ ըստպատմ էինք նրա քունքի երակների բարձրանա-

* Այսպէս եմ կոչում նրան, քանի որ այս տիտղոսի փառնարը մի սէնթ էլ չարժէ Ամերիկայում, յանձին ինքնակոչ Մինաստեանների եւ Համբօեանների...

լուն: Այդ էր ազդարար նշանը համբերանքի սպասումին, եւ վա՛յ նրան ու՛ ձեռք կ'ընկնէր: Մի «փա՛թ» մի («թը՛նկ») և ահա դիակների պէս փուռել են ու արձակում աղիողորմ՝ ճչեր: Իսկ իմ կարգին, նա գիտէր որ ամէնքից քամրնուտուկն եմ, առանց հարուածի էլ լեզապատառ կը լինէի...

Գե՛ոմօ, սիրեցեալ Օննի՛կ, արդեօք թիւրքերին էլ ցոյց տուցի՞ր քո այդ կատաղի թափը:

1906ին Ս. մեկնեցի և վերադարձիս մեր առաջին տեսակցութեան՝ «կանխի՞կ թէ ապառիկ» այս եղաւ դարդիման ընկերիս խօսքը նախ քան բարի դարուստ մաղթելը:

Մի տարի վերջ մեկնել էր արդէն Ամերիկա: Հակառակ բողոքներս չկարողացայ տեսնել գէթ մի անգամ: Լաւ աշխատող եւ խնայող է եղել. բայց ատժել է շատ ֆիզիկով:

Այսօր աչքիս առաջ ունեմ լուսանկարը:


Գեոմօ՛ն ու օձիք, Գեոմօ՛ն ու տափա՛տ...

Իսկի չեմ ցանկանում դիտել ներկայի դիմագիծը վարժապետ, մի գուցէ նախկին տպաւորութիւնս աւերելու անուս ֆիլիզօֆիզ նկատմամբ:

Բախտաւոր ես Օննիկ-Չան որ մի անկիւն գտար մարտիկների Մեծ-Մարտիկին, Սերորի կողքին, ու երբ կարելիութիւն լինի... պատմի՛ր նրան անուշ լեզուով՝ ինչ տեսար:

ՎԵՐՉ





«Ազգային գրադարան»



NL0341098

33455

404
1
2
Մ
Ամբողջ հատոյթը յատկացում է
ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՈՐԲԵՐԻՆ

Ստամբուլու համար

Գիմել հեղինակին

45 Elm Street, E. Watertown, Mass.

Գին 25 Անցժ